իմ ձին խեծնիմ, էրթամ էն գեորգին խասնիմ։

Խասաւ գեորգին. դադրաւ դէմ աղօթրանի, յիշաց զիւր Աստուած, կանչից Քրիստոսի մայր Աստուարածին—ձե պահապան կենայ—դարձաւ չաւուշներուն ասաց. «Չավուշներ, գինացէք ձե թագաւորին ասէք, թէ քեռ ոսկէ խնձիւր տարող տըսիր ինք»։ Էն էլ ձեռ էտու, գեորգ վիրուց, առեց ձեռ։

Չաւուշներ գնացին, թագաւորին ասիցին. «Մենք քեռ ոսկի խնձիւր տանող տըսիր ինք»։

Թագաւոր ասաց. «Գինացէք, ասէք՝ կեայ ըստեղ, թագաւորի բռնաւորն[1]) ի»։

Էկան, ասըցին. «Ցիւ թագաւորի բռնաւորն իս, էրթանք բըռնուի»։

Ասաց. «Թագաւո՞ր, ի՞նչ թագաւոր, ապա մինք թագաւոր. Տէր Աստուած գիտինք. հա՛, հա՛, ձե թագաւորից կռիւ կ'ուզիմ գնացէք, թագաւորին ասըցէք, կռիւ կ'ուզիմ, եա Աստուած կ'տայ ձի, եա իրան. ես ի՞նչը տը կեամ թագաւորին բռնուիմ. կռիւ կ'ուզիմ, որ կռիւ էնիմ»։

Թագաւոր ասկեար[2]) ժողվից։

Բաղդասար տղէն քեառսուն օր, քեառսուն գիշիր կռիւ էրաւ. քառսուն ֆռան խաց, ինչ իլար[3]) էր էրի, մինակ կերաւ. քեառսուն մարդու ջիւր, ինչ կ'կրին, մինակ խմաւ. չթողաւ էդ բիւլիւր քեաղաք ոչ խաց ուտին, ոչ ջիւր խմին, էրաւ փարիզ օր, զինք մինակ կերաւ, խմաւ։ Թագաւորից իլաչ[4]) կտրուաւ. թագաւորի մարդիրն էլ շատիր անօթինէ կ'մեռնին։ Թագաւոր ֆարման էխան[5]) ֆռնչու վերայ, ջրբիրնիրու վիրայ. «Եսախ[6]) ի խաց թխել, ջիւր բիրիլ. ինչ մարդ խաց թխի, ջիւր բիրի, էնի տուն ու տեղ, մալ, ապրանք ոչ թագաւորական ա, ոչ ախշարական. պէտք ա կրակինք, կրակի փայ[7]) էնինք»։

---

[1]) Գերի, բանտարկեալ։ [2]) Ձօրք։ [3]) Կապալ։ [4]) Ճարը։ [5]) Հանեց։ [6]) Արգելուած է։ [7]) Բաժին։